

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ս. Սէֆ. Աղեֆսանդրեան Այգու գնդակահարութիւնը .

Հրատ. Զակկնիգա, 1927, Թիֆլիզ (ռուսերէն)*)

ՏԵՂԵՆԳ այս գրքոյկը նւիրած է ողբերգական մի դէպքի, որ տեղի ունեցաւ 1918 թ. փետրուար 10-ին, Անդրկովկասեան Սէյմի բացման օրը, Թիֆլիզի Աղեֆսանդրեան Այգում: Հեղինակը տալիս է նկարագրութիւնը դէպքի: Կարճ՝ այդ օրը Անդրկովկասի բոլորեակ կենտրոնը յամօճն Ս. Շահումեանի, Կուզնէցովի, Քարաբաճէի եւ այլոց որոշում է Աղեֆսանդրեան Այգում հրապարակային ցոյց կազմակերպել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դէմ: Ցոյցին մասնակցում են մօտ 500 հոգի (վկաների ցուցմունքների համաձայն): Ցոյցը վերջանում է չափազանց ողբերգական ձեւով. վրաց «ժողովրդական գարդիայի» մենշեիկեան 75 հոգիւնց մի զորամաս գալիս է կարմիր դրօշակով ցոյցի վայրը եւ հրազանի բռնում ցուցարարներին, նոյն իսկ գործի է դնում երկու գնդացիք: Դժբախտաբար, բոլորեակ հեղինակը աւելի մտնում է դէպքի մանր իրադարձութիւնների մէջ, քան թէ քաղաքական կողմի. նա պնդում է, թէ զորամասի ուղարկելը եւ գործելակերպը որոշած էր Թիֆլիզի Խորհուրդի գործադիր Կոմիտէում նախագահութեամբ Ն. Ճորդանիայի եւ մասնակցութեամբ Ե. Գեգեչկորիի, Յիմցաճէի, Ռէքրոսի եւ Մուխարիմալու... , թէեւ դէպքից յետոյ վերջիններս ուրացան այս փաստը:

Մենշեիկները իրենց «Բորբա» ռուսերէն թերթում դէպքը ներկայացրին, իրրեւ հետեւանք այն դիրքի, որ զօրամասի հանդէպ բռնել էին ցուցարարները: Դէպքի անկողմնակալ նկարագրութիւնը իր ժամանակին տւել են Թիֆլիզի մեր թերթերը, ինչպէս նաեւ ռուսերէն միւս թերթերը, բայց գրքոյկի հեղինակը այդ միւթը ի նկատի չի առել:

Ի՞նչ էր պատահած դէպքը ըստ էութեանը: Շահումեանը ուղղակի հեռագրաբեղով խօսում է Ստալինի հետ եւ յայտնում, թէ՛ «պաշտպանողական» (ներից**) եւ ազգայնականներից կազ-

* *Ինչպէս մի անգամ առել ենք, արտասահմանի վերաբերմամբ մենք տալիս ենք միայն նոր հրատարակութիւնների զբախտականը, բայց խորհրդային երկրների հրատարակութիւնների համար ժամանակի սահմանափակում չենք դնում. խորհուրդների աշխարհից հրատարակութիւններն այնքան ղեժարութեամբ են ստացւում, որ տարիներ առաջ լոյս տեսած գործերն էլ արտասահմանի ընթերցողի համար նոր են: ԽՍԻ.:*

* *Պաշտպանողականներ կոչւում էին Հայրենիքի պաշտպանութեան կողմնակիցները, բողեիկները պարտուղականներ էին (պօրածենքի՝ ռուսերէն):*

մըւել է Անդրկովկասեան իշխանութիւն գլխաւորութեամբ Գեգեչկորիի: Մենք պայքար ենք յայտարարել նրան, իբրեւ հակայեղափոխական մարմնի: Զօրքերը իշխանութեան կազմակերպումը հաշուում են անջատում Ռուսաստանից: Մենք կարող ենք, յենւելով զօրքի մեծամասնութեան եւ Բագուի խորհրդի վրա՝ ստիպել նրանց նանաչել ժողովրդական կոմիսարների իշխանութիւնը:» Այս խօսակցութիւնը պատրակ բռնելով վրացի մենշեիկները, որ տիրող էին Թիֆլիզի խորհրդում, որոշում են բանտարկել Շահումեանին եւ կուզենցովին: Բոլշեիկները յենուում են երկաթուղու 300-րդ վերստի վրա կուտակած ռուսական դէպի տուն չուղ գօրամասերի վրա: Թէ ինչ է պատասխանել Ստալինը Շահումեանին, Սէֆը չի գրում, բայց մենշեիկները տիրում են Թիֆլիզի զինապահեստներին եւ զինուում: Հետագայ դէպքերը ցոյց տւին, որ զենքը Անդրկովկասեան կառավարութեան ղեկավարներին պէտք է, ոչ թէ յառաջ խաղացող քիւրժ բանակի հետ պայքարելու համար, այլ բոլշեիզմի, ներքին բշմամիների դէմ:

Իսկ ինչո՞ւ Շահումեանը իշխանութեանը չտիրացաւ, Սէֆը չի բացատրում, թէ եւ հեղինակն է «Ճշմարտութիւնը Շաւոնի մասին» գրքի եւ պէտք է իմանայ, որ մենշեիկ-մուսաւաք-ղեկավարների հրահանգով Շաւոնի շրջանի թուրքերը, զինւած գիւղացիները, զինաթափեցին անցնող գօրամասերը եւ արեան բազմիքներ սարքեցին: Շաւոնում հազարաւոր ռուս զինուորներին սպանդանոց առաջնորդող բոլշեիկները նոյն մեղադրական աքոռի վրա պէտք է նստեն դահիճների հետ: Գահիճներին Սէֆը գտել է, մնում է, որ պարզէր եւ դաւանանքէն սպանդանոց բռնողներին:

Հ. Յ. Գաշնակցութեան դիրքը այդ պայմաններում այնքան համապատասխան էր վայրկեանի պահանջներին եւ

յեղափոխականին վայել, որ նոյն իսկ բոլշեիկ Սէֆը ստիպւած է խոստովանուել, որ «Գաշնակցութիւն կուտակցութիւնը» այն տեսակետին էր, որ ռուսական զօրքերին տուն տանելը, որ ֆարոգում էին բոլշեիկները, դէմ էր յեղափոխական Ռուսաստանի շահերին: Բոլշեիկ ղեկավարները մաքրեցին նակատը Վէհիք փաշայի առաջ Շաւոնում ռուս զինուորներին կոտորել տալու համար: Մի օր երբ գրւի անկողմնակալ այդ օրերի պատմութիւնը, կը պարզուի նաեւ կուրացած բոլշեիկների խամար, որ նակատի մաքրումը հարւածեց ոչ միայն հայութեան շահերին, այլ եւ Ռուսիոյ: Հ. Յ. Գաշնակցութիւնը, թէ Շաւոնի եւ թէ Ազեխանդրեան Այգու դէպքերին կողմ չեղաւ. ֆաղափակական կուր ասպետները՝ մենշեիկ-մուսաւաքականներն ու բոլշեիկները ուզում էին նակատը դէպի ներս տեղափոխել, իսկ Հ. Յ. Գաշնակցութեան մտահոգութիւնը արտաքին նակատն էր: Այդ երեւում է եւ Սէֆի յիշած ֆննիչ յանձնաժողովի բոլշեիկ անդամ Տրանսիմի յատուկ յայտարարութիւնից, թէ՛ «սոց.-յեղափոխական եւ Գաշնակցութիւն կուտակցութեան ներկայացուցիչների անկողմնակալ վկայութիւնը...» հաստատում է Թիֆլիզի գործադիր կոմիտէի հակայեղափոխական ելոյթը՝ հրացանագարկ անել ցուցարարներին:

Սէֆի այս գրքոյկը մի հետաքրքրական վկայութիւն է, որ թէ բոլշեիկները եւ թէ մենշեիկները միացած էին նակատը մաքրելու մէջ եւ որ Հ. Յ. Գ. ֆաղափակականութիւնը այդ շրջանում «յետեւից գնացող» որակողներն եւս կը հասկանան, որ Հ. Յ. Գաշնակցութեան դիրքը ֆաղափակական վէճը (մենշեիկ-բոլշեիկ) յետաձգելու մէջ էր յանուն նակատի, որովհետեւ դէպքերի վայրերը նակատի թիկունքն էին: